

Տ. Տ. ՄԱՍԹԵՈՍ ԻԶՄԻՐԼԵԱՆ

ՆՈՐԸՆՏԻՐ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



Հայութիւնը՝ սակաւաթիւ օրերու մէջ՝ երիցս աննախընթաց համաձայնութիւն ցուցուց՝ փառաւորելով Մեծ անձը՝ որոյ արժանիքը բարձր է յիրաւի և նուիրական։

Արիւնուուշտ բանակալութեան դէմ՝ անվեհեր ախոյեան և վահան կանգնեցաւ՝ տառապեալ և մարտիրոս ՀԱՅ ԺՈՂՈՎՌՈՒԻՐԴԻՆ ՀԱՅՐԱՊԵՏԸ՝ 1894ին Օսմանեան պետութեան ներկայացուցած պատմական յիշատակագրովը։

* * *

Յունիս 11ին Թուրքիոյ Սահմանադրութեան հաստատուելուն և Ազատութեան առաջին շեփորը հնչելուն՝ Հայ ազգը գիտցաւ փառաւորել՝ իւր սիրոյն ողջակէզը, տասներկու տարի աքսորեալ մնացած ԱՆԲՆԿՃԵԼԻ ՆՈՐ ՀԱՅՐԻԿԸ։

Եթէ հիասքանչ եղած էր ԿՈՂի տարագիր Մեծ Հայրապետի մուտքը ի հինն Բիւզանդիոն, ամենափառահեղ եղած նկարագրեցին օրագիրը՝ ՈՍԿԻԱՍԻՐՏ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԻ ընդունելութեան հանդէսը Մարմարայի ջուրերուն մէջ, Վոսփորի նոր ափանցը վրայ։ Հոն, Բիւզանդիոնի համաշունչ Հայութեան միացած՝ տարբեր ազգերու՝ հիւրընկալ պատգամաւորներու մարդկային ովկիանոսը, ովսաննաներով գիմաւորեց ՊԱՐՏՈՒՑԸ ԶՈՀ ՄԵԾ ՀԱՅԸ։

**Կրօնքի, Օրէնքի, Հայրենիքի պաշտպան՝ ԵՐԿԱԹԵԱՅ
ՊԱՏՐԻԱՐՔԸ, ամսոյս կին՝ Ազգային Խորհրդարանի ամէն
կուսակցութեանց երեսփոխաններէ անխտիր՝ միաձոյլ համա-
ձայնութեամբ ընտրեցաւ վերստին՝ ՊԱՏՐԻԱՐՔ Կ. ՊՈՂ-
ՍՈՅ:**

Իսկ այսօր մեծ ուրախութեամբ լսեցինք որ նոյեմբեր
14ին, յէջմիածին գումարուած Ազգին բոլոր պատուիրակները,
միասիրտ, միահոգի, լիաքուէ հոչակեր են Հայ ժողովուրդին
բարոյն նախանձայոյգ՝ երբեմնի ՄԵԾ ՏԱՐԱԳԻՐԸ, երէկուան
ԱՄԵՆԱՊԱՏԻՒ ԻԶՄԻՐԼԵԱՆԸ՝ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻ-
ԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:

* * *

**Մամուլի հինաւուրց ներկայացուցիչ ԲԱԶՄԱՎԵՊԸ՝
կ'արձանագրէ այս տողերը իբր ապացոյց Հայկական ոգւոյ վը-
սեմութեան՝ որ գիտցաւ փառաւորել՝ ԱՆՉՆԱՆՈՒԿԻՐ ԳՈՐ-
ԾԻԶԸ, և պաակել՝ ՈՒՂՂԱՄԻՏ ԵՒ ԱԶԳԱՍԵՐ ՀԱՅՐԱ-
ՊԵՏԻՆ արժանիքը:**

Կարգը Նորին Վեհափառութեան է, “վերանորոգելու զա-
մենայն ինչ ի Քրիստոս ։ Ահա այս է իր կոչումը, և Ազգին
բաղձանքը՝ քանի որ նոյն իսկ Էջմիածնի պաշտօնական ամ-
սագիրն Արարատ՝ պարզաբանած էր Մայր Աթուին և բո-
վանդակ նուիրապետութեան թերութիւնները և վէրքերը :

Մենք ուրիշ առթի պահելով Նորին Վեհափառութեան հա-
մակրելի դիմանկարը և ամփոփ կենսագիրը մեր ընթերցողաց
ներկայացընելու հաճոյքը, առ այժմ բովանդակ Ազգին միա-
համուռ իղձերուն կը խառնենք նաև մեր ջերմաջերմ մաղթանք-
ները առ Տ.Տ.Մ. ԻԶՄԻՐԼԵԱՆ, ՀԱՅՐԻԿ՝ լինելու ՓԱՐՈՍ
ՄՇՏԱՎԱՌ և ՄԵՆՏՈՐ ԱՆՄԱՀ յօգուտ և ի պարծանս
ՀԱՅՈՒԹԵԱՆ :